

ԵՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Տ. 4 IV. 1.276

1813

473 70


# ԴԱԼԼԱՔԻ ԱԽՉԻԿԸ

— — — — —

Հիմի գիտունքը էտևոց են դարի,  
ել էտուր վրեն խօսիլու ինչ բան է,  
երնեկ գրգենամ ումն ինչ դաւի,  
թէ գլուն-գլունար ում սիրեկան է:

ԴԱԼԼԱՔԻ ԱԽՉԻԿԸ ԱՍԱԾՆ Է

— — — — —



ԹՐԱԼԻՌ

ԷԼԵՎՏՐԱԿԱՐ ՏՊԱՐԱ ՕՐ. Ն. ԱՐԱՆԵԱՆԻ, ՊՈՒՆ. 7

1909

01 JAN 2009  
19 NOV 2013

ՀՐԱՄ.  
113-27002

Մ. ԳՈՒՂԱԶԵԱՆ

891.99  
9-95

3-27002

## ԴԱԼԼԱՔԻ ԱԽՉԻԿԸ

Հիմի դիմունքը էտէնց ին դարի,  
եւ ետուր զրէն խօսին ինչ բան է.  
երնէկ գիրենամ ումն ինչ դաւի,  
թէ փլան-փսառնը ում սիրեկտն է:

ԴԱԼԼԱՔԻ ԱԽՉԻԿԸ ԱՍԱԾՆ Է

18655

ԱՆԲ. № 22637

Թ Ի Ֆ Լ Ի Ս  
ԷԼԵՔՏՐԱԿԱՐ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՐԱՆԵԱՑԻ, ՊՈԼԻ. 7.  
1909

27 MAR 2013  
PROS VON E.

ROOS MAG. NO.

26658

# ՊՐԻՎԱՆԱ ԴԳԱԼՈՒՄ

Հայոց ազգական պահանջման  
և ազգային ազգային ազգային պահանջման  
պահանջման ազգային ազգային պահանջման  
և ազգային պահանջման  
պահանջման ազգային պահանջման



40486-67

Հ Բ Ա Յ Ա Խ Ա Վ Ա Խ  
Հ Ա Յ Ա Խ Ա Վ Ա Խ Ա Խ  
Հ Ա Յ Ա Խ Ա Վ Ա Խ Ա Խ

ԻՐ ԽԵԶԱԽԵՊԵՐ

ԱՐԱՄ ԳՐԻՔՈՒՐՈՎԻՆ

ԱՐԱՄ ԳՐԻՔՈՒՐՈՎԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Էս գիր ժինողը

## ՄԵ ԷՐԿՈՒ ԽՕՍԿ ԵԼ

### ԱԲՐՋՄ ԳՐԻՔՈՒՐՈՎԻՆ

Չունքի լաւ գիղիմ՝ էսթատով բանիր  
Քու խասիաթին խիստ է դուր զալի,  
Էնդուր էլ ուրախ ու հալալ սրտով  
Վիկալա ու քիզ թաւազա արի։

Դիղիմ՝ վուր կարթաս շատ կու ծիծառիս,  
Քէփի բաց կուլի էս հանգի բանում։  
Ումիկ էլ ունիմ՝ բէղամաղ շըլիս,  
Վուր քիզ իմ էստոնք թաւազա անում։

Մ. գ.

Վեճու նոյ սիրֆայ և ուսուր ուն պանց  
ով տունույլ նոյ սով մինչու ուսու  
դըմին նոյ առաջ չը խօժքն անու  
ովով ու շաքար զրու ու մանաւն

Անխով առ ուսուր ու զրու նոյ զմիս  
Ճանա մասս նային նոյ զրու  
**ԴԱԼԱՐԻ ԱԽԶԻԿՐ** մանաւն  
Ճանաւնը ու զրու զուգանախն

Միղա քիզ Աստուձ, հազար ջէր միղա.  
Յիս էս գլխէն իմ քի միղա գալի,  
Վուր աւէլ պակաս թէ իմքին ասիմ  
Բախշիս իմ միխկը անգիղենալի։

\*

Չունքի ուզում իմ մէ իմքին պատմի,  
Սիրուն ու ջըհէլ մէ կընզա խաբար,  
Վուր խալիսը դիփունք լաւ ճանչնան նրան  
Ու լաւ իմանան նրա ալ ու ափալ։

\*

Էնգուր էլ գուզիմ մուզայթ կենայ,  
Վուր եանզիշ չը գամ, սուտ իմքին չասիմ,  
Անմիղ տիղ միխկի տակը չը ննզնիմ  
Ու էն խիխճ կնզան զուր չը բամբասիմ։

Չունքի հա, դրուստ է աճկովս իմ տեհի,  
Շատ բանին ինքս իմ վրահասու էլի,  
Համա անգճով էլ շատ իմ իմացի  
Ճանանչն ու եադը խաբար ին բերի:

\*

Ասինք իմ փայն ես դրուստ կու խօսիմ,  
Սուտը չիմ սիրում, սատանի բան է.  
Պարտական ըլի այեադ դադաստնին  
Ճշմարտութենին ով զալատ անէ:

\*

Ու թէ ուրիշից լսածներէմէն  
Մէբաշ սուտ դուս գայ մէ էրկու իմքին,  
Էտումը թող յիս դաւի չունենամ,  
Դրա միխկն ու վարցկը ասողի շինքին:

\*

Էյ, քախկի ջըհէլ ու սիրուն տղէրք,  
Ինձ անգաճ արէք, էս ձիգ իմ ասում.  
Շատ փայն դուք իք էստում միղաւուր,  
Չունքի էլ իսկի ամութ չիք բաշում:

\*

Կօխտա զուքվում իք, մօղնի զպլտում,  
Չէշմակնիրն աճկին, ձեռներում տրօստի,  
Ու բուլվարներում բարիշնեքանց յիդ  
Բօլթա իք տալի ու անում պոօշտի:

6

Ասինք բարիշնէն էնքան էլ վունչիչ,  
Զանդամը, նրանց յիդ ինչ գուզիք անիք.  
Հալբաթ վիրչումը գանգատով-բանով  
Չիր խարաբ ապրանք դուք պիտի տանիք.

\*

Համա էն է ձիր միղաւուրութին,  
Վուր էտքամով էլ դաբուլ չիք անում.  
Փըսակւածին էլ չիք թողնում մայնց,  
Նըրանց էլ ջուդ իք իիլքէմէն հանում:

\*

Նրանք էլ խիխճիրը խափւում ին էլի,  
Չիր լիզուն ումը չի խափի աբա,  
Էն էլ կնիկարմատ—էրգէն մազիրով,  
Խիլքով կի շատ կարճ ու առանց բափա:

\*

Ննդնում ին ձիգ յիդ խօշ ու բէշ անում,  
Օջախն ու մարթը մտէմէն զցում.  
Էլ նամուս, աբուս, ամութ, ինչ բան է,  
Էտ բանի մասին ով է մտածում:

\*

Իժում սովորում ին լաւ լաւը հազնիլ.  
Դուխի, ումարիլ, փայտօն, կարէտ.  
Թանգ թանգ տիղիրը ճաշ, իրիգնահաց,  
Տրիատր, մուզիկա, օպէրա-բալէտ:

7

Թէ մարթն էլ մէ քիչ ձեռը պակաս է  
Թամաշա արէք նրանց քինթ ու պոռւնգին.  
Մէ էն հանգի ին գաթխէշվա ըլում,  
Կօսիք փշել ին սիրաջի ոռւմբին:

\*

Թէ քիչ էլ իրանք աճկում լիս ունին  
Ու հալիլումն էլ մտիկ ին տալի,  
Էնչախը տեսէք խիխճ մարթկանց հալը,  
Վայն էկիլ է ու նըրանց տարի:

\*

Էլ չին խօսեցնում էրգէն ու բարակ,  
Դրա կօնսիստօր եա սուղն ին փախչում,  
Թաթարիախնի խնդիրք ին տալի  
Յիղն էլ մէ բանի մօծամա կանչում:

\*

Գանգատ ին անում խիխճ մարթկանց վրէն  
Ու սուտի աճկիրն ապրուծվա անում,  
Խնդրում ին բաժնին մէկսմէկէմէն,  
Չունքի վուր միթամ էլ չին դիմանում:

\*

Վուր միթամ իրանց չին մտիկ տալի,  
Մէ գլուխ դուքներում հարփում ին տրաքւում,  
Իրանք կի տանը քախցած ու ծարաւ  
Մաշած ու պատռած շուրիր ին հաքնում:

8

Վուրն էլ աշկարա շառ է մօգօնում,  
Միթամ մարթն իրան քօթակ է տալի.  
Չունքի նա ուրիշ սիրեկան ունէ  
Ու ինքը նրան էլ չէ դուր զալի:

\*

Էսէնց շառիրով, սուտ-սուտ բանիրով  
Մարթկերանցէմէն զաղրա ին ըլում,  
Իրանց բաժինքն էլ յիդը վիկալում  
Ու էլի հօրանց տընիրը գնում:

\*

Մէկ էրկու շափաթ սիվիր ին հաքնում,  
Տներէմէն էլ ուշ ին դուս գալի.  
Խալսի էրէսը չին ուզում տեսնի,  
Միթամ աշխրքից ձեռ ին վիկալի:

\*

Իժում կի գնում ին սիրեկներու մօդ,  
Իրանց սրտերու ուզածը անում  
Ու էնդումէն դէն էլ վունց մէ բանի  
Պակասութինը նրանք չին իմանում:

\*

Զարխի լիզու է վուր բանեցնում ին,  
Խիխճ սիրեկներու ջիբիրը դարտկում,  
Զեր կամաց-կամաց ու քիչ-քիչ խուզում,  
Վիրչը կի մէբաշ թողնում ին պարտկում.

9

Մէկին բարաթի վուր կու իստկին,  
Իժում մէկէլի եախիցն ին կպչում,  
Դիփունանց համն էլ տեսնում, կշտանում  
Ու էլի ձերած ուրիշ տիղ թռչում:

\*

Մարթիք դարնում ին նրանց ձեռի աղլուխ,  
Ովօր շատ ունէ նրանց մօդ ին գնում,  
Ուստաաւարի ծծում ին ջէր լաւ,  
Յիփ հատացնում ին ճամփու ին դնում:

\*

Փէշակումն էլ վուր լաւ դուս ին կանգնում  
Ու նաստախաշի դարնում ին ուստա,  
Էլ այնումը վունչիչ չին զցում  
Ով գուզէ վրէն հաչէ ու դուս տա:

\*

Թէ իմքին կօսին ջուղար էլ կուտան,  
Իրօրում խօսկի տակը չին մնա,  
Ազատութին է կնգղերանց, կօսէ  
Սիրեկնօրա է ամեն տիղ հիմա:

\*

Այ միը կնգղիրը վունց ին փչացի  
Ու խարաբ արի միր օխնած քաղաք:  
Ափուս չէր էլի պապերանց վուխտը,  
Ո՞վ էր իմացի էստունքը աղաք:

10

Էն վուխտվա կնիկը ինչ կնիկ է էլի,  
Գանա մարթ նըրա էրես կու տեսնէր.  
Նրա բանը մենակ տուն էր ու կութնէն,  
Իր մարթու ննգիր ու հալալ կէսն էր:

\*

Հիմիկվա կնգղիրք կի միղա Ասծու,  
Դոշ ու ծծիրն ին խալիխն շանց տալի,  
Յեղիվն էլ մէ մինձ բօխչա ին շինում  
Ու քուչէրումը էնէնց ման գալի:

\*

Թէ մէ կոնէմէն աղերանցն իմ միղ դնում,  
Մէկ էլ տեսնում իմ, վուր էտ էլ շրկա.  
Տկլուր ախչիկը ով տեսնի արա,  
Վուր համփիր է ու իշտահի շը գա.

\*

Ուղարնօէմէն վուր ճքնաւուրն էլ  
Գա միը կնգղերանց թամաշա անէ,  
Նա էլ իր սաղմուս մտէն կու զցէ  
Ու հոքէմէն էլ ձեր կու վիկանէ:

\*

Խիխճ ջըհէլ աղերանց էլ ինչ միղ դնիմ,  
Նրանք էլ աճկ ունին, խօ չին քօռանա,  
Զօռով մաղէրը աշա ին անում,  
Էլ վունց համփիրին, կանան դիմանա:

11

Ուզին թէ չուզին յիդը կու ննգնին,  
Մէկին պօլապօշկ, մէկին շապ կարնին,  
Օչովի խաթըը չին կանա կոտրի  
Թէգուզ ջիբէմէն ձեռը վիկալնին:

\*

Միր ջէհէնիրն էլ էսէնց ին անում,  
Էնդուր էլ օչով կընիկ չէ ուզում.  
Ինչ կօնին պսակ, դաւիդարաբա,  
Հազիր ուանգ-ուանուզ ին միշտ ձեռը գցնում:

\*

Իժում թէ վիրճը ինչ պտին ըլի,  
Էլ աւենուրթէ, աբա ինչ խօսիմ.  
Առանց էտուրն էլ խիստ էրգենացաւ,  
Հիմա վուխտն է իմ պատմութինն ասիմ:

\*

Սրամէն մէ հինգ թէ վից տարի առաջ  
Մէ մարթ էր կենում հաւլաբրի թաղում  
Համ լաւ դալլաք էր, համ էլ լաւ գցող  
Համ էլ խանդիսխան լաւ կարտ էր խաղում:

\*

Մէ կընիկ ունէր, մէկ էլ մէ ախչիկ:  
Ախչիկը տասնուվից տարեկան էր,  
Սիւսիւ աճկիրով ու սիւ մազիրով,  
Կօլօլ էրեսով խիստ դուրեկան էր:

Կրօփիկի շկօլում նա ման էր գալի,  
Կարիլ ձեւելու փէշակ էր սորվում  
Ու շկօլի ճամփին խիխճ ջէհէլ տղերանց  
Սիրտն ու ջիգարը էրում էր խորվում:

\*

Ամէն Ասծու օր շկօլի առչիվը  
Դաստա ու դաստա մօդ էին ըլում,  
Վուրն ինչ էր ասում, վուրն ինչ խօստանում  
Ու մէկսմէկու ձեռնէմէն խլում:

\*

Վուրն էլ թէ բերնով չէր կանում ասի,  
Թաքուն մէ էրգէն բարաթ էր գրում.  
Օրթում էր ուտում, վուր նըրա էշխից  
Հալւում է ջանը ու խիլքը գընում:

\*

Խնքը օչովին լայիդ չէր անում,  
Խիստ սուրիօզնի էլ ման էր գալի,  
Սրտումը շատ էլ հպարտանում էր,  
Համա վունց մէկին ջուղաք չէր տալի:

\*

Իրա դադըը խիստ լաւ էր իմանում,  
Էն էլ լաւ գիդէր վունց պիտի ժաժ գա.  
Գիդէր վուր էնէնց բան պիտի բռնի,  
Խնչօր բարիշնա ախչկան սազ գա:

Էնդուր օչովուն էրես չէր տալի,  
Չունքի չէր ուզում մազանդէն գցի,  
Իմացիլ էր վուր էտթաւուրնիրը  
Դիփունքը վիրչում փողոցն ին մացի:

\*

Մէնակ մէ շկօլն էր ու իրենց տունը,  
Ուրիշ տիղ գընալ դէղէն չէր թողնում,  
Չունքի ասում էր հիմիկուա տղէրքը  
Զէհէլ ախջկան սաղ-սաղ ին գողնում:

\*

Նա էլ իր դէղի խաթրը չէր կոտրում,  
Ինչօր ասում էր անգաճ էր դնում.  
Չէր ուզում ծնողին բէղամաղ անի,  
Դիփ նրա ասած ճամփով էր գնում:

\*

Մէնակ գրիրն էր նրա բան ու գուրձը,  
Բերում էր մէզուխ ու անվիրչ կարթում,  
Գիշիրն ինչկի լուս գողինքում պարկած  
Շատ կարթալէմէն աճկիրն էր ջարթում:

\*

Խանդիսխան գիրը ձեռին կու քնէր,  
Լամփէն էլ էնէնց կու թողնէր վառած.  
Էտ մէկը դէղէն չէր դաբուլ անում,  
Ասում էր նաւթը վուղով է արած:

14

Թէ մէկ ասում էր, մէկ էլ չէր ասում,  
Խունար ախչիկ էր ու չէր նիղացնում.  
Էլի գիշիրնիր ինքն էր վիկէնում,  
Ախչկան ծածկում ու լամփէն հանգցնում:

\*

Խան էլ կու հարցնէր—ախչի, Վարինկա,  
Մէ ինձ էլ պատմէ ինչ է գրած էտի,  
Պղնձէ քաղաքի պատմութին խօմ չէ,  
Եա խօրվելի գիր, եա էփրէմվերդի:

\*

Չէ, դէղի ջան,— ախչիկը կօսէր.  
Էտունք հնացած խտօրիէք ին.  
Էստի դիփ թազա իմքնիր է գրած,  
Ու խիստ սաղ էկող միր ժամանակին.

\*

Գրած է, թէ վունց ին ախչկան նշնում,  
Վունց ին մէկմէկու սիրում ու յարգում,  
Վունց ին վաթաթւում, վունց ին պաչչում  
Ու վունց ին համով գողինքում պարկում:

\*

Խիսճ դէղուն էտունք չէին դուր գալի.  
Էտ ինչ լպստած բանիր է, կօսէ,  
Ո՞վ է իմացի, վուր ջէհէլ ախչիկ  
Էտունքը կարթա ու էտունք խօսէ:

15

Ախչի, վարինկա, մի կարթա, կոսէ,  
Գլխումդ փիս-փիս բանիր կու մտնի,  
Լաւ է զուր կարթաս հին էփրէմփէրդին,  
Տիս լուսնեակը յիփ պիտի մթնի:

\*

Նա էլ մէմէ գամ մօր խաթէր համա  
Մէ էրկու փուրցէլ դրանցմէն կու կարթար,  
Գիշինիրը կի գողինքում մենակ  
Զեռին կու բռնէր էլի իր դաւթար:

\*

Էսէնց միր խելօք խունար վարինկէն  
Մօր խիլքի յիդ էլ եօլա էր գնում,  
Համ նըրա սիրտը չէր կոտրում անմիղ,  
Համ էլ իր սրտին մըհամ էր գնում:

\*

Անցկացաւ էսէնց մէ քանի տարի,  
Ղուրս թամամացրուց, ատէստատ ստացաւ,  
Դէն գցից շկօլի փարթուկն ու փօրմէն,  
Մօդնի շուր հաքաւ ու ուրախացաւ:

\*

Դարաւ վուր թամամ նշնելու ախչիկ  
Ու խիստ էլ բլօմա ուզողնիր ունէր,  
Ով ասիս գանա, վուր չէին ուզի,  
Էնքան խելօք ու էնքան սիրուն էր:

16

Դէղէն դիփ էն էր աղանչար անում  
Էրնէկ չը մեռնիմ ջէր էնքան կոսէ,  
Վուր քիզ մէ լաւ տիղ տիղաւուրեցնիմ  
Ու իժում Աստուծ թող հոքիս ուզէ:

\*

Համա խիխճ կնիկը հալբաթ միխկ ունէր,  
Սրտի խոխուրթին արժանի չէլաւ.  
Մէ գիշիր մէբաշ խիստ հիւընդացաւ,  
Յիրիք օր պարկից, վրայ չուրսին մեռաւ.

\*

Խիխճ դալլաք Պէտօն մնաց վուրփէվերի,  
Դարդէմէն ուփրօ խըմիլը կցից.  
Էլ այնումը վունչիչ չէր գալի,  
Դիփունանց մէտի մտէմէն գցից:

\*

Ախչիկն էլ կօսիս մէ քիչ շունչ քաշից  
Ու կամաց-կամաց բաց արից վուտը.  
Բատանիցկի բաղ, մուշտակիթ, բուլւար  
Գնաց ու արաւ նըրանց համի ու հուտը:

\*

Սկսից տղերանց յիդ զնակօմիտ ըլիւ  
Ովօր գլուխ էրիդ յիդը գօստացաւ.  
Ումը շատ հաւնից սիրունութէնով,  
Ամենքին թաքուն սէրը խօստացաւ:

17



Ինչպի կէս զիշիր պիփ ոռւսն էր ննգած,  
Խան մուշտէյթում, խան բուլւարներում.  
Խօմ տուն գալիս էլ մենակ չէր ըլում,  
Կաւալէրնիրը տուն էին տանում:

\*

Իժում էլ սովրից պրօժէկտօր ման գալ.  
Պարիժի ժանրով խօմ լիքն է քաղաք,  
Վուր կարտիչկով ին խալիսին շանց տալի  
Տկուր կնդդերանց յեղիվն ու աղաք,

\*

Զէր առջի գամը հէստի ամանչից,  
Վուր սաղ էրեսը ալէծվա էլաւ,  
Զէր կանում խալիսի էրեսը տեսնի,  
Ամութու հալւից, քիչ մնաց մեռաւ.

\*

Իժում կի տեսաւ, վուր ամութ բան չէ,  
Խալիսը դրա համա զլուխ էին պատրում,  
Տեսաւ վուր հիմի մօղումը էտ է:  
Էլ օչով չէ գնում ցիրկ ու տրիատրում:

\*

Ինքն էլ սիրտ առաւ ու էլ չէր բաշւում  
Յիփ կաւալէրը էնդի էր տանում,  
Մտիկ էր տալի աճկիրը շրած  
Ու մտիկ տալով էլ չէր կշտանում:

18

Ու կէս զիշիրը վուր տուն էր գալի  
Զարթած, թուլացած գողինքն էր մտնում,  
Շամփուրի պէս էր շուռ ու մուռ գալի  
Ու էլ գնջութին իսկի չէր գթնում:

\*

Էրազներումն էլ զիփ նրանց էր տեսնում,  
Բերնի ջուր գնում, աճկիրը զիղնում,  
Հէստի էր քրտնում, տաքութին տալի,  
Վուր բաղնիսումն էր կօսենաս լիղնում:

\*

Խան վիր էր թուչում գողինքից մէքաշ,  
Գուզէր հալիլում իրան էլ տեսնի,  
Թէ իրա դօշն ու ծծիրն էլ էնէնց  
Նըրանց պէս լաւն է ու ինտերեսնի:

\*

Մէ օր էլ ճամփին իր մէ կաւալէր  
Ինչօր բան էրիդ փաթթած թխտով,  
Խնթրից ջէր մենակ տանը տիս, կօսէ,  
Իժում կի մէտի կու տնդդինք ջխտով:

\*

Նա էլ վիկալաւ ու ջիբը գըրից.  
Ինչ կու փիքը անէր մէչն ինչ կուլէր.  
Ինչու տուն եկաւ իրն իրան հասաւ,  
Շամփիրութինը էլ էնքան չունէր:

19

Տուն մտաւ թէ չէ լամփին մօտկացաւ  
Ու ջիբէմէն էլ հանից էն կապուց,  
Հէստի դողցնելով սկսից բաց անիւ  
Կոսիս խազնա էր մնացի իր պապուց:

\*

Զէր մենակ մէկը վուր տեսաւ թէ չէ,  
Տիղն ու տիղ սառաւ ու լիզուն ցամքից,  
Գլուխը ժաժ էկաւ ու հէստիկ դարաւ,  
Կոսիս մէ օմքին գլխումը փամփից:

\*

Զանը դուղ ննգաւ, բօշացան վուտնիր,  
Լաւ էր վուր մօղիկ սկամի էր դրած.  
Էն սահաթնէվէթ վիր ննգաւ էնդի  
Ու խէլիմ վուխտը ջեր էտէնց մնաց:

\*

Իժում յիփ քիշ-քիշ ուշկը մօդ արից,  
Հիմի էլ սկսից ամութը տանջի,  
Էլ վհւնց մտիկ տա էն սիւ էրեսին  
Գանա չը պիտի ինքն էլ ամանչի:

\*

Էտ փիքըն էլ վուր քիչ անցկացաւ գնաց,  
Էլի կապուցը միտն էկաւ ձերած.  
Ուզից դիփ տեսնի, ինչիր է տւի  
Էն լպստածը, էն գլուխը մեռած:

20

Ու լաւ բաբաթին դիփ մէմէկ տնդղից,  
Տնդղից ու տնդղից անկշտում աճկով.  
Էնէնց խարբացած մտիկ էր տալի,  
Կոսիս ուզում էր կուլ տա դիփ պաչկով:

\*

Ու ինչիր տեսաւ... դիփ ջուրա-ջուրա  
Ու տկլուրացած տղա ու ախչիկ,  
Էրնէկ ինչ ձեռք էր վուր էտունք նիշից,  
Ով էր գլուխ մեռած էն փօտօգրափչիկ.

\*

Դիփ մէտի վուր լաւ տնդղից, կշտացաւ,  
Զէր ուզից կրակ տա, դիփ մէտի էրի,  
Իժում միտն եկաւ իր պադրուգէքն էր,  
Թող նրանց էլ շանց տա ու էշիփ բերի:

\*

Այ միր վարինկէն էսէնց բանիրով  
Ճանանչից կինքը իր ջէհէլ վախտի.  
Էնէնց դուս կանգնից էտէնց բաներում,  
Վուր փորցած կնիկը չէր կանա ախտի:

\*

Ու վճոից մտկում, վուր ինչ էլ ըլի  
Զալդով իր համա մէ օմքին ճարէ,  
Փըսակւի յիդն ու սիրտը զնջացնի  
Թէ չէ առանց մարթ ապրիլ դժար է:

21

Սկսից խօսկ զցիլ սրա մօդ ու նրա մօդ,  
Վուր մէկին էլա զցէր իր ճանգում,  
Համա կնիկ ուղիլ օչով միտկ չունէր,  
Իր դարսած պլանը չէր գալի հանգում:

\*  
Հին ուղողնիրն էլ թախ էին կացի,  
Հիմի էլ ինքն էր ուղողնիր պտրում.  
Թագէքն էլ մէմէկ հիռանում էին  
Ու խիսճ Վարինկի ումիկը կտրում:

\*  
Տարիքն էլ ջալդ-ջալդ գըլորւում էին,  
Քսանուհինգէմէն անցկացաւ լամիս.  
Անդէր տարումն էլ ինչ կա էրանի,  
Էնէնց է փախչում, վունցօր մէ ամիս.

\*  
Էրեսը քիշ-քիչ սկսից ձմշկիլ,  
Աճկիրն էլ կօսիս ինչօր փօս ննգան,  
Ինքն էլ յիդն ու յիդ ծանդրացաւ, նստից  
Ու նմանւեցաւ փուրթու տէր կնգան:

\*  
Գիշիրնիր փիս-փիս էրազ էր տեսնում,  
Սաղ ջանը մէտի մօշլա էր անում,  
Ու առուտնիրը էլ գողինքէմէն  
Ինչու կէս օրը դուս գալ չէր կանում:

Ու նստած սաղ օր հալիլու առշիվ,  
Տնղղում էր մէ գլուխ իր կօլոլ էրես,  
Թէ ինչի տղերքը առաջուա նման  
Էլ չէին քաշում իրա ինտէրես.

\*  
Ախար դրուստու դրուստ ջէր խօմ չէ պառւի,  
Ջէր մազիրումն էլ մէ սիպտակ չկայ.  
Ի՞նչ անինք թէ քիչ աճկիրն է գիղնի,  
Էտ խօմ աղաթ է ամէն ախչկայ:

\*  
Ա՛յ թէ մէ Աստուձ բախտը բաց կօնէ  
Ու իր զսմաթին ջալդ ուսսա կու բերի,  
Հէստի չաղանա ու սիրունանա,  
Վուր մտիկ տւողին դիփունանցն էրի:

\*  
Լսից մէ օր էլ խխճի ձէնն Աստուձ  
Ու բախտի դուռը մէրաշ բաց էլաւ.  
Էլ չէր իմանում թէ ինչ էր արի,  
Ուրախութենից լամիս լաց էլաւ:

\*  
Մէ փէշաքաւուր մարթ էր լուս ննգի,  
Ինչօր երգրէմէն նուր գիւիր էկած,  
Տեհիլ էր մէ օր Վարինկին ճամփին  
Ու հաւսի նըրա էրեսը ներկած:

Իժում էլ էկաւ հօր դալլաքիսանում,  
Մահանա արից, մազիրը խուզից,  
Զէր էնէնց հիուից մէ մէ խօսկ զցից,  
Վիրչը դէմուղէմ ախչկան ուզից:

\*

Հէրն էլ հախ Ասծու շատ ուրախացաւ,  
Իր ախչկամէն նա շատ էր բեզրի.  
Ուզում էր վախտի ռագ անի գլխից,  
Բաժինքն էլ առչուց առիլ էր հազրի.

\*

Մէ քանի մարթուց հարց ու փուրց արից,  
Իմացաւ վուր տղէն պատւական տղայ էր.  
Լաւ աշխատաւուր, լաւ վարք ու բարքով,  
Հէնց իրա սրտի ուզածն էլ դա էր.

\*

Խնքը խօսկ էրիդ ու մէ իրիգուն  
Տանը չառւ վրայ համեցէք արից,  
Դուս բերից իժում իրա Վարինկին,  
Կուխքին նստեցրուց, իրիսճ տղին հալից:

\*

Ախչիկը մէքաշ վուր տեսաւ տղին  
Լիդին պատուից ու մընաց սարած.  
Օխնածը թուրմէ հէստի քինթ ունի,  
Կոսիս զուռնա է պատին կախ արած:

Զէր քինթ ու պոռւնգը խիստ դէվէր թողից,  
Լամիս ուզում էր վուր անի ատկագ.  
Վիրչը կի յիփօր կինացնիր խմեցին,  
Ինքն էլ կուլ տւից քիչ լիմօնատկագ:

\*

Փիրը արից՝ էտ էլ ձեռնէմէն թողնի,  
Դիփ մէկ է ուրիշ օչով չի արնի.  
Տեսաւ վուր ուրիշ էլ չարա չունի,  
Պիտի նրա քնթի եախիցը բռնի.

\*

Ու դաբուլ կացաւ, նշանն էլ արաւ,  
Մէ զօռբա ձէնով պուշտի էլ արին.  
Խօսկ էլ կապեցին, վուր էլ չուշացնին,  
Էկող կիրագի լաւ հարսնիք անին:

\*

Հարսնիքի օրն էլ մօղկացաւ ջալդով.  
Մօդ հարուր հոքի ունէին մէձրած.  
Մէ կուռ սազանդար, մէ կուռը զուռնա,  
Պօվէր, լաքիա զուրած ու պէտլած:

\*

Փէսէն դարդիմանդ, զիփ իրն էր խարջը,  
Ինչկի քսան թուման մխսիլ էր լօթին.  
Ամէն ջուրէմէն բլօմա էր արի,  
Մտիկ չէր տւի հաշւին ու շշօտին:

Ինքն էլ սէրթուկով զուքւիլ էր կօխտա,  
Դօշին էլ սիպտա ծաղիկ էր ցցի,  
Էրեն ուրախու սաղ կարմրիլ էր  
Ու քինթը ուփրո խիստ էրգէնացի:

\*

Ղօնաղ բարիշնէր իրանց մէջ թաքուն  
Ծիծաղում էին Վարինկի վըրայ,  
Թէ վունց էն քնթին մտիկ տա պիտի  
Ու յիդը ապրի, կնիկ ըլի նըրա:

\*

Մէ խօսկով շատ լաւ հարսնիք արեցին,  
Ինչկի մէկէլ օր խալխը քէփ արաւ.  
Փէսէն կի շատ վաղ զընաց պարկելու,  
Չիմ գիղի հարփից, թէ բունը տարաւ.

\*

Էքսի օր խալխը վուր դաշա էլաւ  
Ու ամէն մարթն էլ քաշւից իր տունը,  
Գնացին փէսին էլ զարթեցրին էնչախ,  
Չունքի կէս օր էր—հերիք էր քունը:

\*

Դուս էկաւ փեսէն... ու քու դուշմանը  
Ինչ էն սահաթին նա քէփի վրէն էր.  
Քինթ ու պուռնգ հէստի դէվեր էր թողի,  
Վուր էլ նվ կօսէր, թէ էս էն տղէն էր:

Չիմացան խիսճը ինչի էր ջզրած,  
Հախ Ասծու ինքն էլ օչովու չասից.  
Չիմ գիղի միխսն էր ափսուսը գալի,  
Թէ վոշմանում էր, վուր կընիկ ուզից:

\*

Մախլաս, սէկրէտը օչով չը գիթաւ,  
Թէ ինչ անցկացաւ էն գիշիրն էնդի.  
Մէկ ինքը գիղէր, մէկ էլ իր Աստուձ,  
Ու կուլի մէկ էլ կնգան էր յայդնի:

\*

Կնիկն էլ բերանը խիստ էր հուփ տւի.  
Ովօր հարցնում էր ջուղաբ չէր տալի.  
Հալբաթ եա մարթու խաթրու էր անում,  
Եա ամանչում էր, վուր կնիկ էր դարի:

\*

Մախլաս, ապրեցին մէ քանի տարի,  
Հախ Ասծու լաւ էլ մարթ ու կնիկ էին,  
Իրանց տուն ու տիղ, օջախ սարքեցին  
Ու ապրում էին ուրախ, արխէյն:

\*

Վարինկի քէփին էլ քէփ չէր հասնում,  
Օր օրի վըրայ առաչ էր գընում.  
Համ սիրունացաւ, համ խիստ չաղացաւ,  
Էնէնց վուր էլ վիրչ բալիշ չէր դընում:

Մարթուն իր կնիկը խիստ էր դուր գալի,  
Ու շատ էլ ազիզ մազիզ էր պահում,  
Նըրա մէ խօսկը գեղին չէր գցում,  
Ինչ էլ ուզում էր վունչիչ չէր խնահում:

\*  
Խիստ մարթը Աստուծ—Աստուծ էր անում,  
Վուր կնիկը ջալդ մէ էրեխայ բերի.  
Վուտնիրը մէ լաւ բուխաւ թող զցւի  
Ու դարնա իստակ օջախի գերի.

\*  
Համա Վարինկէն չէր էրկօքսանում.  
Ասինք էտումը ինքը ինչ անէր.  
Վուրթի բերիլը իր ձեռին խօմ չէր,  
Էտ բախտն էր խարար ու Ասծու բան էր:

\*  
Վադ լիզուէրը կի ասում էին,  
Վուր միթամ թաքուն դիղիր է շինում,  
Չէ ուզում կօսէ վուր էրքօքսանա,  
Չունքի տնէն դուս թռև գալ է սիրում:

\*  
Էտուրն ինչ ասիմ, աճկով չիմ տեսի,  
Ու վուչ էլ կանամ յիս օրթում ուտի.  
Էտ մէկ բանի մէչ յիս դաւի չունիմ,  
Ովոր տեհիլ է թող նա հաստատի:

Էն կի լաւ գիզիմ, վուր ճշմարիտ է,  
Մէ զլուխ բազարում բօլթա էր տալի  
Մարթուն էլ իսկի անգաճ չէր անում,  
Չէր հարցնում թէ էտ նրան չէ դուր գալի:

\*  
Դօխտուրն է ասի ինձ էսէնց, կօսէ,  
Մացիօն անիմ ամէն օր պիտի,  
Վուր չաղութինս ուփրօ չաւելնա  
Ու հիւնդութին չը ստանամ սրտի:

\*  
Տանն էլ կուխնումը վաննա էր սարքի,  
Էտ էլ դօխտուրի սօվէտով գանա.  
Վուր առուտեհան ու իրիզնիրը  
Ամէն օր սարը ջրում լիղանա:

\*  
Ամառն էլ մէ զլուխ դաշա էր գնում,  
Առանց էտուրը իստակ կու մեռնէր.  
Էն հաստութենի տէր կնիկարմատը  
Խօմ քախկի շուքից չը պիտի էրվէր:

\*  
Ի՞նչ անինք էնէնց վուր հաստացիլ է  
Ու սօրօկովի դարիլ է բօչկա.  
Հալբաթ իր կազմը էտէնց է էլի,  
Իրա ձէռումը վունչիչ բան խօ չկա:

Մարթն էլ միշտ պիտի դօխտուրին լսէ,  
ինչօր նա ասէ ու ինչօր գըի  
Դիփ մէմէկ մէմէկ պիտի կատարէ,  
Թէ վուր ուզում է կնիկն առուխչ ըլի:

\*

Էլ ի՞նչ խօսկ ունի խիսճ նաշար մարթը,  
Էլ ատկազ անիլ կարող է գանձ.  
Ունէ թէ չունէ դիփ պիտի անի,  
Միրում է կնգան, ուրիշ ի՞նչ կանա:

\*

Ուկատարում է, ատկազ չէ անում,  
Սաղ կինքը կնգա վըրէն է դրի.  
Օղօնց իր վարօն չը հիւնդանա,  
Թէգուզ իր գլուխը չարիփուխ ըլի:

\*

Կնիկը կի էլի օր օրի վըրայ,  
Դիփ հաստանում է ու դարնում գոռքա,  
Ինքը կի նրա մօդ էնէնց է բօյով,  
Կօսիս նրա տղէն է մէ պստի բօրփա:

\*

Բազարում մէտի վուր անց ին կենում  
Ամութու մարթուն քրտինք է գալի,  
Չէ կանում գլուխը էլ վէրիփ քաշի,  
Ով ասիս նըրանց մտիկ ին տալի:

Ասինք դրա համա ով է վիքը անում,  
Խօմ ինքը աստղով, բախտաւուր մարթ է.  
Թող մտիկ տան ու ճիճինի տրաքւին,  
Վուր իրա կուխքին էնթաւուր վարթ է:

\*

Համա դարդն էն է, վուր կամաց-կամաց  
Անգածին ինչօր բանիր է դիքչում,  
Թաքուն իր կնգա անունն ին տալի  
Էնէնց աշկարա, չին էլ ամանչում:

\*

Խիսճ մարթն ամութու գեղինն է մտնում,  
Չէ կանում ինալիսին էլ մտիկ անի.  
Լսում է մէմէկ ու չէ իմանում,  
Թէ ումմէն պիտի իր ջիգը հանի:

\*

Խան վիքը է անում, թէ կնգան ասի.  
Ինչիր ին խօսում ըի վըրայ, ախչի,  
Ցիդն ահ է քաշում, վուր չը չարանա  
Ու չը վիկենա մարթուց չը փախչի:

\*

Իժում ի՞նչ կօսին ովօր իմանա,  
Էլի խիսճ մարթուն չին խայտառակի,  
Չին ասի՞ կնգան չը կանաց պահի,  
Թողից ուրիշի ծուցումը պարկի:

Հաւն էն է էլի մունջ կացած կենա,  
Միթամ չէ լսում, անգած էլ չանի.  
Թաք իր դուշինկէն իր կուխքին ըլի,  
Ղաբուլ է ինքը ամէն մի բանի:

七

Ու ման է գալի Վարինկէն ազատ,  
Էլ նըրա քէփին քէփը չի հասնում,  
Շուրիր է հաքնում էնթաւուր թանգ-թանգ,  
Կոսիս անհատնում փուղ ունէ խազնում:

木

Սիրտը բաց ունէ ամենքի համա,  
Մէ գլուխ էրեսին ծիծաղ է գալի.  
Ինչքան ուզում է թող խալիսը խօսի,  
Նըրանց հաշելուն չէ մտիկ տալի.

Մարթը խօմ իրա խիլքին է ննզի,  
Վունցօր ուզում է էնէնց է խաղցնում,  
Ել ումմէն պիտի վախի ու քաշւի,  
Ո՞վ է իր տէրը, ումն ի՞նչ է հարցնում:



ՀՀ Ազգային գրադարան  
  
NL0337247

26658

13-21002

9.11.1. 1. 5 400.